

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Վաղուց հետէ նախապատրաստուող և էյզենախի վերջին կանքերէնցիացով հաստատուած «գերմանական աւետարանական եկեղեցու ժողովը» (կոմիտետ)» նոյեմբերի 10-ին կազմեց առաջին խորհուրդը: Այդ ժողովով գերման—բողոքական եկեղեցիներն ունեցան իրանց տեսական օրդանը, որ մի որոշ չափով շաղկապում է նըանց գործունէութիւնը: Կոմիտետի տեղն ու բոշուած էր Դրեզդենը, նրա նախագահի, պալատական քարոզչի և Դրեզդենի աւետարանական լուտերականների կոնսիստորիայի վոխ-նախագահ Ակկերմանի ընակավայրը՝ իսկ բացումն—Լուտերի ծննդեան օրը՝ նոյեմբերի 10-ին: Առաջին ժողովին կոմիտետի անդամները միմիանց ողջունելուց յետոյ՝ ըստ Պերկ. Եհետ.-ի իրանց նպատակը ընդգծեցին հետեւալ կերպով.

«Մենք չենք ձգտում, յայտնեցին նրանք, եկեղեցական նոր ձևեր կազմակերպելու՝ աշխարհական պետութիւնների նման: Խրաբանչեւը պետութեան եկեղեցին պէտք է գոյութիւն ունենայ իւր դաւանութեան համար՝ ինչպէս եղել է ցարդ՝ իւր առանձնայատկութիւններով, իւր կարգերի ու հիմնարկութիւնների համեմատ: Բայց կան ընդհանուր շահեր, որոնց պաշտպանել ենք ցանկանում: ընդհանուր բարիք՝ որոնց պահպանել ենք կամենում: ընդհանուր կարիք՝ որոնց հեռացնել ենք ցանկանում: Եթէ ապագայում պէտք լինի օրէնք զնել՝ անխառն կրօնական-բարոյական հարցերից՝ այդ այժմ ըլպէտք է վճռուել մի ուրիշ եկեղեցու աղքեցութեամբ. մինչդեռ, երբ աւետարանական մեծամասնութիւնը մնայ առանց ներկայացուցի, մենք էլ հարկաւոր վայրեանին կը խօսենք և կը պաշտպանենք, եսը պէտք լինի աւետարանական եկեղեցու շահերը: Եթէ համարձակորէն անարգանքի ենթարկուի մեր աւետարանական եկեղեցին, այն ժամանակ առաջապահ կը լինենք և խօսիյն կը մաքառենք: Եթէ ուրիշ աւետարանական եկեղեցիներն էլ կամենան ընկերանալ Գերմանիայի աւետարանական եկեղեցուն, կը կունենք բարեկամաբար պատասխանել նրանց հրաւերին, կանենք այն ամենը, ինչ որ պէտք լինի ամրապնդելու օտարերկրեաց եղբայրների հետ կապը: Մեր ցանկութիւնն է միասին բաւականութիւն տալ եկեղեցական կարիքներին թէ գերմանական կոլոնիաներում և թէ նրանց սահմաններից դուրս տարածուած համայնքներում, դաւանակցի բոլոր հնարաւոր միջոցներով: Աւետարանական ընդհանուր շահերի համար դեռ որքան գործելու դէպքեր կը դրանուն:

Ըստ Պերկ. Յետ. Գերման աւետարանական եկեղեցական կոմիտեափ վերայ շատերը կառկածով են նայում, կաթում են, որ միանալով այդ կոմիտեափին՝ կը կորցնեն իրանց լնգնութեամբ, ազատութիւնը, կախման գրութեան մէջ կը մնան. և ուժեղացած կոմիտեաթ կարող կը լինի հառմել եկեղեցու գերը կատարել իւր հաւատակիցների վերաբերութեամբ: — Անհաւատալի բան չը կայ: Այս կոմիտեափի նման մի գաշնակցութիւն են կաղմել Աւստրիայի աւետարանական լուտերական գերմանացիներն էլ նոյն նոյեմբերի 10-ին, կենդրոնավայր ընտրելով Վենենսան, որի նպատակը պէտք է լինի՝ ժողովներ կաղմելով, երեկոյթներ, հրապարակական գառախօսութիւններ և տօներ սարքելով, դրքեր հրատարակելով, լուտերական համայնքների թշուառներին օգնելով, եկեղեցիների շինութեան օժանդակելով, լուտերականներին ոլաշտականելով՝ թեթևացնել նրանց կարիքները, . . . :



ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆԻ ԵԿ ԲՈՒԴԴԱՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԻ ԱՐԵՒՄՈՒՏՔՈՒՄ

Վերջաբանում աւելորդ չեթ լինի համառօտ կերպով մտանիշ անել այդ երկու համաշխարհային կրօնների հիմնական տարբերութիւնների վերայ, որպէս զի քրիստոնէութեան ճշշմարտութիւնը և աստուածային լինելը ևս առաւել պարզ աչքի ընկնի:

Բուդդան իւր դարի որդին էր: Նա մեծացաւ արևելեան ճոխութեան մէջ, առատութեամբ ճաշակեց կեանքի վայելչութիւնը, ունէր կանայք և պարեկներ, և միայն կեանքից զզուելուց յետոյ դարձաւ նա յեղափոխական: Երբ Բուդդան մի ըզքօսանքի ժամանակ, ճանաչեց կեանքի դառնութիւնն ու վրշտերը, պատահելով մի ծերունու, գօսացածի, մեռեալի և մի ճգնաւորի, որը նորան—կեանքից յուսահատուածին, խորհուրդ տուեց փախչել աշխարհից, այն ժամանակ նա անհաւատարմութեամբ թողեց իւր կնոջը և կեանքի տանջանքից մի փրկութիւն դանելու համար, ողորմութիւն հաւաքող կրօնաւոր դարձաւ: Վերջապէս նա իւր ժամանակի փելիսոփայութեան եղ-